



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 217

ք.Արտաշատ

„27“ 08 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ  
ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշման դրույթներով և ի կատարումն Արարատի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2018 թվականի հիմնական միջոցառումների պլանի 12.2 կետի 12.2.1 ենթակետի՝

### ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2018 թվականի սեպտեմբերի 20-ին Արարատ քաղաքում կազմակերպել և անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն՝ «Մասնակի փլուզված շենքում որոնողափրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը» թեմայով:

2. Ուսումնավարժությանը ընդգրկել՝

1) Արարատի մարզային փրկարարական վարչությանը.

2) Արարատի մարզային փրկարարական վարչության Արարատի հրշեջ փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ.

3) Հայաստանի էլեկտրական ցանցեր փակ բաժնետիրական ընկերության «Արաքս» մասնաճյուղի «Արարատ» էլեկտրական ցանցը (համաձայնությամբ).

4) Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արարատի մարզային վարչության Արարատի բաժինը.

5) «Արարատի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության շտապօգնության բրիգադը.

6) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Արարատի գազիֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղի Արարատի տարածքային տեղամասի վթարավերականգնման ծառայությունը (համաձայնությամբ).

7) «Վեոլիա Ջուր» ՓԲԸ «Արարատ» տեղամասի վթարավերականգնողական խումբը (համաձայնությամբ):

### 3. Սահմանել որ՝

1) ուսումնավարժության ղեկավար է հանդիսանում Արարատի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարարական ծառայության գնդապետ Ա.Ամիրջանյանը.

### 4. Ուսումնավարժության ղեկավարին՝

1) կազմակերպել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերի մշակումը.

2) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավված ուժերի նախապատրաստումը.

3) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել սեպտեմբերի 14-ին:

4) ուսումնավարժության անցկացման ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, ուսումնավարժության արդյունքների ամփոփագիրը ներկայացնել ինձ:

5. Սույն կարգադրությունը հայտարարել ըստ առնչության:

6. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արարատի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարարական ծառայության գնդապետ Ա.Ամիրջանյանին:

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ